

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԵՐԳԵՐ ՈՒ ՎԵՐՔԵՐ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Բանալի բառեր - ռոմանտիկական հույզ, էքզիստենցիալ փիլիսոփայություն, մետաֆիզիկական էություն, այգու այլաբանություն, տառապալից իմաստություն:

Ամփոփում

Աշխատանքը նվիրված է Ավետիք Իսահակյանի բանաստեղծական ժողովածուի՝ **«Երգեր ու վերքեր»**-ի փիլիսոփայական, գեղագիտական և խորհրդանշական վերլուծությանը: Հետազոտության **նպատակն** է բացահայտել Իսահակյանի վաղ շրջանի պոեզիայի ներքին տրամաբանությունը՝ այն ներկայացնելով որպես սիրո, տառապանքի և ինքնաճանաչման միահյուսություն: Աշխատանքը ցույց է տալիս, որ ժողովածուն ոչ միայն երիտասարդ բանաստեղծի հոգևոր կենսագրությունն է, այլև հայ գրականության մեջ ռոմանտիկական հույզի և էքզիստենցիալ փիլիսոփայության հանդիպման յուրահատուկ հարթություն: Հետազոտությունը կատարելիս գործածել ենք պատմահամեմատական, հոգեբանական, կենսագրական մեթոդները: Հետազոտության **խնդիրներն** են՝ վերլուծել բանաստեղծական «ես»-ի ինքնադրսևորումը, սիրո և բնության խորհրդանշական պատկերները, ինչպես նաև ուսումնասիրել, թե ինչպես է տառապանքը վերաճվում ստեղծագործական ուժի: Աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է նրանով, որ Իսահակյանի պոեզիան ներկայացվում է ոչ թե որպես դասական սիրերգություն, այլ որպես մետաֆիզիկական որոնում, որտեղ տառապանքը դառնում է իմաստի և հոգևոր հասունացման աղբյուր:

Աշխատանքի **գիտական նորույթն** ընդգծվում է «Երգեր ու վերքեր»-ի նոր ընթերցման մեջ՝ այն դիտարկելով համաշխարհային փիլիսոփայական համակարգերի համատեքստում՝ ստոիկների, Ֆ. Նիցշեի և Մ. Դոս-

տոնակու գաղափարների ներգործությամբ: Վերլուծության շնորհիվ պարզվում է, որ ըստ Իսահակյանի՝ տառապանքը ոչ թե կործանում է մարդուն, այլ ձևավորում՝ դառնալով գոյաբանական իմաստնության ճանապարհ:

ANGELINA HAYRAPETYAN

Master's student

Yerevan State University

angelhayr2002@mail.ru

AVETIK ISAHAKYAN'S "SONGS AND WOUNDS" COLLECTION

Key words: romantic emotion, existential philosophy, metaphysical essence, allegory of the garden, wisdom through suffering.

Abstract

The present work is devoted to the philosophical, aesthetic, and symbolic analysis of Avetik Isahakyan's poetic collection *"Songs and Wounds"*. The main goal of the study is to reveal the inner logic of Isahakyan's early poetry, presenting it as an interweaving of love, suffering, and self-awareness. The research demonstrates that the collection is not only the spiritual autobiography of a young poet but also a unique plane where the romantic sentiment and existential philosophy converge within Armenian literature.

In conducting this study, historical-comparative, psychological, and biographical methods were applied. The main objectives include analyzing the self-expression of the lyrical "I", the symbolic representations of love and nature, and exploring how suffering transforms into creative energy. The relevance of the research lies in viewing Isahakyan's poetry not merely as classical love lyricism, but as a metaphysical quest where suffering becomes a source of meaning and spiritual maturity.

The scientific novelty of the work is emphasized in its reinterpretation of *"Songs and Wounds"* within the context of global philosophical systems, under the influence of Stoic thought, Nietzsche's philosophy, and

Dostoevsky's existential insights. As a result of the analysis, it becomes evident that for Isahakyan, suffering does not destroy the human being but rather shapes and elevates them—turning pain into a path toward ontological wisdom.

АНГЕЛИНА АЙРАПЕТЯН

Магистрант

Ереванский государственный университет

angelhayr2002@mail.ru

СБОРНИК АВЕТИКА ИСААКЯНА «ПЕСНИ И РАНЫ»

Ключевые слова: романтическое чувство, экзистенциальная философия, метафизическая сущность, аллегория сада, мудрость через страдание.

Аннотация

Данная работа посвящена философскому, эстетическому и символическому анализу поэтического сборника Аветика Исаакяна — «*Песни и раны*». Цель исследования — раскрыть внутреннюю логику ранней поэзии Исаакяна, представив её как сплетение любви, страдания и самопознания. Работа показывает, что сборник является не только духовной биографией молодого поэта, но и уникальным пространством, где романтическое чувство соединяется с экзистенциальной философией в контексте армянской литературы. В исследовании применены историко-сравнительный, психологический и биографический методы. Основные задачи — проанализировать самовыражение поэтического «я», символические образы любви и природы, а также изучить, как страдание превращается в творческую силу. Актуальность работы обусловлена тем, что поэзия Исаакяна рассматривается не как классическая любовная лирика, а как метафизический поиск, где страдание становится источником смысла и духовного созревания. Научная новизна исследования проявляется в новом прочтении «*Песен и ран*» в контексте мировых философских систем — под влиянием идей стоиков, Ницше и Достоевского. Анализ показывает, что для Исаакяна страдание не разрушает человека, а формирует его, превращая боль в путь к онтологической мудрости.

Ներածություն

Ավետիք Իսահակյանը հայ պոեզիայի այն դեմքերից է, որի ստեղծագործական աշխարհը միավորում է ռոմանտիկական հույզը, էքզիստենցիալ փիլիսոփայությունը և հոգևոր ինքնաճանաչման տառապալից ճանապարհը: Նրա բանաստեղծական ժողովածուն՝ **«Երգեր ու վերքեր»-ը** (1908), ոչ միայն սիրո ու կորստի պատմություն է, այլև ամբողջ մի հոգևոր կենսագրություն, որտեղ մարդը բացահայտում է իր ներաշխարհի սահմանները: Իսահակյանը կարծես վերածվում է **միջնորդող ծայնի**՝ կապելով ազգային հոգին և համամարդկային մտածողությունը: Նրա պոեզիայում սիրո և տառապանքի հակադրությունը դառնում է գոյաբանական որոնման առանցք. սերը՝ որպես վեհագույն իղձ, վերափոխվում է տառապանքի, իսկ տառապանքը՝ ստեղծագործ ուժի: Յուրաքանչյուր «երգ» ծնվում է «վերքից»:

«Երգեր ու վերքեր» ժողովածուն

Ավետիք Իսահակյանի բանաստեղծական առաջին ժողովածուն՝ «Երգեր ու վերքեր»-ը, լույս է տեսել 1898 թվականին Ալեքսանդրապոլ քաղաքում՝ բնիկ գյումրեցի Գեորգ Սանդյանցի՝ Բեյքոյան փողոցի վրա գտնվող տպարանում: Բանաստեղծական շարքերի կողքին նա արդեն գրել էր իր «Հեղափոխական էպոսի»՝ «Մասսա Մանուկի» առաջին տարբերակը, ստեղծել էր հարյուրից ավելի բանաստեղծություններ, արձակ լեզենդներ և զրույցներ, հարյուրավոր էջեր «Հիշատակարանի», համառոտագրել Նիցշե և Շոպենհաուեր, գրել փիլիսոփայական էսսեներ, թարգմանություններ կատարել եվրոպական դասականներից:

Դեռ նախքան «Երգեր ու վերքեր» ժողովածուի հրատարակումը Իսահակյանն իր գրական գործունեությամբ արժանացել էր որոշակի ուշադրության, ինչի մասին գրել է նաև ժողովածուի առաջին գրախոսը՝ Նիկոլ Աղբալյանը. «Ովքեր հետևում են մեր պարբերական հրատարակություններին, նրանց ծանոթ է անշուշտ պ. Իսահակյանի անունը, որ 4-5 տարի է արդեն, ինչ տպում է իր բանաստեղծությունները «Տարագում», «Արաքսում» և «Աղբյուրում»: Ընկերների ու գրականությունը սիրողների փոքրիկ ու նեղ շրջաններում նրա մասին խոսում էին, նրան հետևում էին, կարդում, անգիր էին անում նրա ոտա-

նավորները, վեճ ու զրույցի նյութ էին դառնում նրա շնորհքն ու գրվածները, որոշ կարծիք էին կազմում նրա մասին» (Աղբալյան, 1898: 840): 1899 թվականին Իսահակյանը ցանկացել է վերահրատարակել «Երգեր ու վերքեր» ժողովածուն՝ ավելացնելով մի քանի նոր ստեղծագործություններ: Նրա արխիվում պահպանվել են գրքի երկրորդ հրատարակության համար նախատեսված ստեղծագործությունների ցանկը՝ առաջին գրքի երկերն ու 1896-1898 թվականներին գրված մի շարք նոր բանաստեղծություններ: Սակայն գրքի երկրորդ հրատարակությունը չի իրականացել հեղինակի՝ Օդեսա արքունիքում պատճառով (Իսահակյան, 2000: 425): Մեր ուսումնասիրությունը կատարելու ենք «Երգեր ու վերքեր» ժողովածուի 1908 թվականին լույս տեսած գրքի շրջանակներում, որն ունի մի քանի տարբերություններ 1898 թվականին լույս տեսած գրքի համեմատ. կան բանաստեղծություններ, որոնք արդեն չկան 1908 թվականի գրքում կամ միևնույն բանաստեղծություններում տեսնում ենք շարադասական, բառագործածական, ուղղագրական ինչ-ինչ տարբերություններ:

Հետաքրքիր է, նաև, թե ում է նվիրված այս ժողովածուն՝ Զարոյի՞ն, Շուշիկի՞ն... Կարծում ենք, որ «Երգեր ու վերքեր» ժողովածուն, այնուամենայնիվ, Վարպետի սրտի բոլոր սիրային թրթիռների ու ապրումների վկայագիրն է, որ կարող էր նվիրված լինել իր բոլոր սերերին... Բայց ինչպիսի՞ն էր այդ աղջիկը, քույրը, կինը. սև աչք-հոնքով, դալար բարդու հասակով, նա հավերժական կին էր...

Ինչու՞ «Երգեր» և ինչու՞ «վերքեր». «վերքեր»-ը բանաստեղծի ապրած, կրած, զգացած ցավերն էին սիրո ճակատում՝ այդ անկառավարելի զգացմունքի ճիրաններում, իսկ «երգեր»-ը այդ ճիրաններից փրկության միակ ուղին էին կամ է՛լ ավելի ընդգծված մխրճումն այդ ճիրանների մեջ: Իսահակյանի առաջին ժողովածուի բանաստեղծություններում մենք տեսնում ենք այն երիտասարդին, որը բռնկված ու վառված է սիրով, սակայն այդ սերը մեկ հրճվանք ու բերկրանք է պարզևում, մեկ ցավ և տառապանք: Խոսում է երիտասարդը, ներկայացնում է իր սիրած էակին, ի ցույց է դնում ամբողջ զգացածը, բայց, միևնույնն է, սիրո վայելումի գագաթնակետին հասնելը դեռևս անհաղթահարելի է:

Գրքի հրատարակումից մոտ մեկ տարի անց ժամանակի հայ քննադատներից մեկը՝ Մինաս Բերբերյանը, Իսահակյանի մասին գրել է. «Նոր բանաստեղծների մեջ յուր գրական և ինքնուրույն տաղանդով աչքի ընկնող Ա. Իսահակյանն այն աստիճանի տխուր և հուսահատ լարեր է հնչեցնում, որ կարծես Լեոպարդիի, Լենաուի, Գուրեանի և այլ սիրերգակաների պոեզիան է վերստեղծում մեզանում: ...Առանձին հրատարակված «Երգեր ու վերքեր» գրքույկի մեջ դեռ երիտասարդ բանաստեղծը հուսահատության անդունդի ծայրին չի կանգնած: Ավ. Իսահակյանի քնարը տխուր է. դարը, պայմանները, միջավայրը, բնավորությունը բանաստեղծին տխրեցրող են դարձրել» (Բերբերյան, 1900):

Ժողովածուն սկսվում է հետևյալ տողերով.

«Ես երգիչ եմ- երկնի թիթեռ,

Ես գանձ չունիմ- լե՛ռ ու բե՛ռ.

Ես սիրում եմ ծաղիկ, աղջիկ,

Ծաղկի բուրմունք, կույսի սեր.

Ես սիրում եմ մրմունջ- տրտունջ,

Տանջված սրտի ե՛րգ ու վե՛րք» (Իսահակյան, 1908: 7):

Այստեղ բանաստեղծական «ես»-ը ներկայանում է որպես **երգիչ**, բայց ոչ սովորական մարդ, այլ **«երկնի թիթեռ»**: Սա անմիջապես փոխադրում է մեզ դեպի խորհրդանշական դաշտ, որտեղ երգիչը մարմնավորում է **ոգին, ազատ թռիչքը, անընդհատ վերելքը**: Այսպես բանաստեղծ Իսահակյանը հայտարարում է իր գոյության ձևը՝ երգիչ, թիթեռ, որը, սակայն, շա՛տ մեծ բեռ ունի՝ ցավ, տառապանք: Նա սիրում է և՛ բնության մաքրությունը, և՛ մարդկային անաղարտությունը, բայց նաև ընդունում է տանջանքն ու դրանից ծնվող վերքերը: Եվ միգուցե հենց այդ տանջանքը՝ վերքն է ծառայում երիտասարդի բանաստեղծ լինելուն՝ երգ հյուսելուն... Իսահակյանի առաջին ժողովածուն շատ հարուստ է լեզվաոճական հնարքներով, բառային հարստությամբ: Հենց այստեղ է երևալու բանաստեղծի ապագա վարպետությունը: Այս բանաստեղծություններում մենք տեսնում ենք նաև Իսահակյանի անխզելի և անժխտելի կապը բնության հետ. բնությունը դառնում է նրա ցավակիցը, հանգստության հանգրվանը:

Երիտասարդը սիրած էակին «քուրիկ» բառով է դիմում: Առաջին հայացքից անհասկանալի է այս դիմելաձևը, մանավանդ, որ այդ «քուրիկն» է դարձել երիտասարդի անքուն գիշերների, կարոտի, անսահման տանջանքների պատճառն ու մեղավորը.

«Անտուն գիշերներ՝,
Անքուն գիշերներ,
Քուրի՛կ, քեզ համար,
Քո սիրով այրած,
Կարոտիդ հըրով, ես շա՛տ լացեցի,
Ես շա՛տ տանջվեցի...» (Իսահակյան, 1908: 11):

Հետաքրքիր է, որ երիտասարդ բանաստեղծի սերն առանց տենչանքի է, որը շատ հազվադեպ հանդիպող երևույթ է. «...Խորունկ սիրեցի առանց տենչանքի» (Իսահակյան, 1908: 13): Եվ հենց այս առանց տենչանքի սերն է, որ մաքուր է, անաղարտ, և միշտ ամենամեծ տառապանքն է բերում:

Մենք նշեցինք, որ Իսահակյանի «Երգեր ու վերքեր» ժողովածուում վայելքն ու տառապանքը մեկ միասնություն են կազմում. անբաժան են: Վայելքի, երազական զգացումների ապացույցն է հետևյալ բանաստեղծությունը.

«Նրանք իմ կեանքը երազ դարձուցին-
Կուսական մաքուր աչերը անու՛շ.
...Շուրջըս փռեցին աստղունք ու ծաղիկ-
Կուսական մաքուր աչերը անու՛շ...» (Իսահակյան, 1908: 14):

Երիտասարդը դիմում է սիրած աղջկան՝ համաձայնելով ամեն ինչին, միայն թե աղջիկն իրեն սիրի. ինքնության սահմանները վերացվում են սիրո մեջ.

«...Ինչ որ ցանկաս, կուզե՛ս լինիմ,
Լինիմ երկիրքն ու երկիր.
Լինիմ ծո՛վ, ժայռ, արև, լուսին.
Միա՛յն, միա՛յն ինձ սիրի՛ր...» (Իսահակյան 1908: 19):

Այստեղ արդեն սիրո թեման դառնում է **մետաֆիզիկական՝** անցնելով սովորական մարդկային ցանկությունից դեպի **բոլոր գոյության ձևերի ցանկություն:** Երգիչն ասում է՝ «լինիմ յերկինք ու յեր-

կիր», այսինքն՝ նա ցանկանում է սիրո մեջ վերացնել **նյութականի և հոգևորի բաժանումը**, դառնալ **ամբողջություն**:

Սիրելի էակը ծաղրում է երիտասարդի անկեղծ արցունքները՝ նրան մխրճելով ավելի խորը ցավի մեջ: Երգիչն այլևս չի կարողանում ապրել այդ իրականության մեջ, ցանկանում է գնալ, հեռանալ:

Հետաքրքիր է, որ այս բանաստեղծություններում երևում է երազներին հավատացող Իսահակյանը, չարագուշակ երազներին.

«Երազ տեսայ- ձեր տան առաջ

Չույալ աղբյուր կը բղխէր...

Ջինջ աղբյուրը, մեկ էլ տեսայ

Յամաք կտրաւ, քար դառաւ:

Քընից զարթնայ,- սիրտս էր տրտում:

Ա՛խ, էս շա՛տ վատ երազ է.

Ծարան՝ ես եմ, աղբյուրը՝ դուն.

Սէրդ ինձ համար ցամքեր է» (Իսահակյան, 1908: 25):

Երազն այստեղ ներկայացվում է որպես **ենթազիտակցության լեզու**, որտեղ իրականությունը վերածվում է խորհրդանշական տեսարանի: Ջուրը շարժում էր, կյանք էր, քարը՝ պապանձում, մահ: Այսինքն՝ սերն այլևս չի հոսում, չի սնուցում, չի ապրեցնում: Այսպիսով՝ սերը մեռնում է որպես հոսք, բայց մնում է որպես հիշողություն, որպես **քարացած հուշ**:

Բանաստեղծը մինչև վերջ հավատարիմ է մնում իր սիրելիին, նույնիսկ այն ժամանակ, երբ գրկում է ուրիշին. նրա սիրտն ու հոգին իր միակ իրական սիրուն են պատկանում. «Ուրիշին գրկած՝ ես քեզ եմ զգում, // Ուրիշի գրկում, բայց քոնն եմ յաւերժ» (Իսահակյան, 1908: 35):

Հայկական, ինչպես նաև համաշխարհային մտածողության մեջ այգին սիրային երգերում յուրահատուկ, խորհրդանշական իմաստ ունի: Երբ այն քանդվում, խաթարվում է, ուրեմն խաթարվում է նաև սերը. ինչ-որ վտանգ ու տագնապ է սպասվում: Իսահակյանի այս ժողովածուում մի քանի անգամ հանդիպում է վտանգի ենթարկված այգու, պարտեզի այլաբանությունը, որը կանխագուշակում է մոտալուտ ապագան.

«... Ձըմբան գիշերին օռնում է քամին.

Եւ իմ պարտիզում մռայլ, ամայի,

Խեղճ ուռիներիս ջարդում է քամին,

...Եւ սերըս ջարդված ուռիների տակ

Մեռնում է մենակ, թո՛ղ յերթա՛ մեռնի...» (Իսահակյան, 1908:

33):

Երիտասարդն այլևս հուսահատ է. նրան ո՛չ երազն է հուզում, ո՛չ բնությունն է ամոքում, ո՛չ էլ դրական հույսեր ունի սիրած էակից. «...-Թո՛ղ վայէ քամին չոր- գլխիս վրա, ես չեմ հաւատում կրնոջ երդումին...» (Իսահակյան, 1908: 37): Սա ոչ թե պարզապէս ցավ է, այլ **հոգևոր անտարբերության սահմանային վիճակ** — երբ մարդն այլևս ոչինչ չի ակնկալում, ոչինչ չի պաշտպանում: Բանաստեղծը չի ասում՝ «չեմ հավատում այս կնոջը», այլ՝ **«կնոջ երդումին»**՝ ընդհանրացում, ընդվզում բոլոր կանանց, ամբողջ սեռի, նույնիսկ սիրո գաղափարի հանդէպ: Քամին ոչ միայն կործանող է, այլև մաքրող տարերք՝ բուժող քամի, որը մաքրում է ամեն ցնորականն ու երազայինը՝ թողնելով երիտասարդի իրական «ես»-ը. «... Կրնոջ համբոյրին է՛լ չեմ հաւատում, շուտ է մոռանում նա վառ արցունքներ. շարժի՛ր, քարաւանս, ինձ ո՞վ է կանչում, գիտցի՛ր, լուսնի տակ չը կայ ուխտ և սէր» (Իսահակյան, 1908, 40):

Այս ժողովածուում տեսնում ենք նաև ժողովրդական վարդի և սոխակի (բլբուլի) այլաբանության մշակումը: Բայց այստեղ ոչ թե աղջիկն է վարդը, այլ տղան՝ ինքնամոռաց սիրահարվածը.

«Ա՛խ, ես սիրոյ ճամբու ասիին

Մենակ բուսած վայրի վարդ եմ.

Անց ու դարձի դժգոյն փոշին

Վերաս իջած, կորած վարդ եմ:

...Հիմի չար եմ, նախանձ եմ» (Իսահակյան, 1908: 130):

Ժողովածուում ամփոփված բանաստեղծություններն ապացույցն են այն բանի, որ բանաստեղծը հաեւ է իր **հոգևոր հասունացման** կետին, երբ մոլորությունը, գաղափարականությունը և հավատքը փոխակերպվում են փորձի, զգաստության և ցավով ձեռք բերված իմաստության: Գիտակցում է, որ **տառապանքն է իրեն իմաստուն**

դարձրել: Այս միտքը գնում է դեպի փիլիսոփայական ընդհանրացումներ՝ ստոիկներ (տառապանքը ձևավորում է բնավորությունը), Ֆ. Նիցշե («Այն, ինչ չի սպանում, դարձնում է ուժեղ»), Մ. Դոստոևսկի (տառապանքի մեջ է ծնվում հոգևոր խորությունը)...

Հետո բանաստեղծը պիտի ցույց տա այն ապագան, որին հանգել է: Այդ ապագայում սիրած աղջիկն այլևս ուրիշինն է: Եվ երբ երիտասարդը հանդիպում է նրան տարիներ անց, ճիշտ է, հպարտորեն է անցնում այդ կնոջ կողքով, բայց բռնկվում է անզուսպ կարոտով: Տանջված, տխրադեմ, դժբախտացած է երիտասարդը՝ երգիչն ու բանաստեղծը. այլևս անհնար է հետ բերել անցյալը կամ որևէ կերպ փոխել այն, որովհետև ոչինչ էլ առաջվանը չէ, որովհետև ամենը կորել է հավերժ.

«...Բայց ես կեանքում շա՛տ սիրեցի ու լացի,

Մէկը չեղաւ, որ իմանար դարդերըս,

Սիրող սրտի ծարա՛ւ, կարո՛ւտ մնացի,

Մէկը չեղաւ, որ գուրգուրէր վարդերըս...»

(Իսահակյան, 1908: 34):

Եզրակացություն

Ավետիք Իսահակյանի «Երգեր ու վերքեր» ժողովածուն ամփոփում է ոչ միայն երիտասարդ բանաստեղծի զգացական աշխարհը, այլև ամբողջ մի սերնդի հոգևոր որոնումների և գոյաբանական ցավի արտահայտությունը: Ժողովածուի բանաստեղծությունները ներկայացնում են սիրո և տառապանքի այն միասնությունը, որի մեջ մարդը ճանաչում է ինքն իրեն, վերածնվում է և հասնում ներքին իմաստնության: Սերն այստեղ այլևս միայն զգացմունք չէ, այլ ճանաչողության և ինքնաբացահայտման գործընթաց. այն դառնում է հոգևոր փորձառություն: Իսահակյանը, լինելով ժամանակի և մշակույթի ծնունդ, կարողանում է իր բանաստեղծական խոսքում միավորել հայ ավանդական մտածողության ու եվրոպական էքզիստենցիալ փիլիսոփայության տարրերը՝ ստեղծելով յուրահատուկ ռոմանտիկ աշխարհայացք, որտեղ տառապանքը ոչ թե կործանման, այլ ստեղծագործական վերելքի սկիզբ է: Նրա հերոսը տառապում է, բայց այդ տառա-

պանքն է նրան դարձնում բանաստեղծ՝ իմաստի որոնող և հայտնագործող:

Այսպիսով՝ «Երգեր ու վերքեր»-ը կարելի է դիտել որպես անցումային փուլ հայ բանաստեղծական մտածողության մեջ, որտեղ զգացմունքը վերափոխվում է գաղափարի, և անձնական ցավը՝ համամարդկային իմաստնության: Ժողովածուն հաստատում է այն գաղափարը, որ տառապանքը մարդու հոգևոր կատարելության անհրաժեշտ պայմանն է, իսկ սիրո վերքը՝ հոգու զարթոնքի սկիզբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աղբալյան Ն.**, «Երգ ու վերք», «Մուրճ», Թիֆլիս, 1898, № 6, էջ 840:
2. **Բերբերյան Մ.**, «Նոր-Դար», Թիֆլիս, 1900, մայիսի 20:
3. **Իսահակյան Ա.**, Ավետիք Իսահակյան: Գիտական կենսագրություն, Գիրք առաջին, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, 601 էջ:
4. **Իսահակեան Ա.**, Երգեր ու վերքեր, տպ. «Հերմէս» Ս. Պ. Եղիգարեանի, Թիֆլիս, 1908, 287 էջ:
5. **Ջրբաշյան Էդ.**, Չորս գագաթ, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1982, 468 էջ:

REFERENCES

1. **Aghbalyan N.**, «Yerg u verk'» [Song and Sorrow], «Murch», T'iflis, 1898, № 6, ej 840.
2. **Berberyan M.**, «Nor-Dar», T'iflis, 1900, mayisi 20.
3. **Isahakean Aw.**, Yerger u verk'er [Songs and Wounds], "Hermes" S. P. Yedigarian, Tiflis, 1908, 287 ej.
4. **Isahakyan A.**, Avetik' Isahakyan. Gitakan kensagrut'yun [Avetik Isahakyan: A Scholarly Biography], Girk' arrajin, Yerevan, HH GAA «Gitut'yun» hrat., 2000, 601 ej.
5. **Jrbashyan Ed.**, Ch'vors gagat', [Four Summits], Yerevan, «Sovetakan grogh» hrat., 1982, 468 ej.